

## ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՔՄԱՅԱԳՈՒՅՔԻ ԱՌԱՐԿԱ ՉԷ

*Քանասիր. գիտ. դոկտոր Է. Կ. ԵՁԵԿՅԱՆ*

Վերջին ժամանակներս դարձյալ աշխուժացել են ոչ գիտական քմահաճ ու կամայական հարձակումներն արդի գործող, ՀՀ պետական լեզվի ուղղագրության դեմ առանց որեւէ մասնագիտական, ուսումնամեթոդական, մանկավարժական փաստարկների ու հիմնավորման, հենց այնպես՝ պահանջելով ուղղագրական համակարգի նոր փոփոխություններ: Նախ, տեսնենք, թե ե՞րբ եւ ինչո՞ւ է փոխվում որեւէ լեզվի ուղղագրությունը, ընդհանրապես ինչի՞ց է սկսվում ուղղագրական բարեփոխումների անհրաժեշտությունը:

Ուղղագրական փոփոխության անհրաժեշտությունն ամենից առաջ զգացվում է այն դեպքում, երբ գրության եւ արտասանության միջեւ նկատելի են դառնում որոշակի, էական տարբերություններ, երբ քերականական առանձին իրողություններով լեզվական կամ արտալեզվական գործոնների պատճառով գրությունն զգալիորեն հեռանում է արտասանությունից: Վերջիվերջո, յուրաքանչյուր լեզվի գրությունն անմիջականորեն կախված է եւ սերտորեն պայմանավորված տվյալ լեզվի գրական արտասանությամբ եւ պատահական չէ, որ երկար ժամանակ, դեռեւս XVIII դարում տիրապետող եւ առաջնորդող է եղել «Գրիր այնպես, ինչպես խոսում ես...» սկզբունքը:

Մի խոսքով մեզանում հայ իրականության մեջ, ուղղագրական փոփոխությունների պահանջը սկզբնավորվել է ոչ թե 1920-ական թթ., ինչպես կարծում են որոշ միամիտ պահպանողականներ, այլ դեռեւս անցյալ դարի 80-ական թթ., երբ գրությունը որոշակիորեն հեռացել էր արտասանությունից եւ որի հետեւանքով արդեն նկատելի էին դարձել ուղղագրական զգալի դժվարություններ, զուտ գործնական, մանկավարժական, ուսուցողական առումով:

Մանրամասների մեջ չմտնելով, նշենք, որ դեռեւս դարիս 10-ական թթ. սկզբներին «Հանդես ամսօրյա», «Մշակ» եւ հատկապես «Արոր» լրագրերում լույս են տեսնում բազմաթիվ հոդվածներ, ուր խիստ եւ բացահայտ դժգոհություններ են հայտնվում գործող ուղղագրության մեջ արդեն իսկ եղած խառնաշփոթ վիճակի առիթով: Հատկապես նշվում է բառամիջում *օ-ո, ե-է* ձայնավորների եւ *ւ/բ* բաղաձայնի գրության մասին: Այս շրջանում բանը հասել էր այնպիսի ծայրահեղության, որ նույնիսկ դպրոցական տարբեր դասագրքերում միեւնույն բառը կարող էր գրվել մի դեպքում *ւ-ով*, մեկ այլ դեպքում *ւ-ով* եւ կամ էլ՝ *ու-ով*: Նույն իրավիճակն էր տիրում նաեւ վերելում նշված ձայնավորների գրության դեպքում: Այնպես որ ուղղագրական վերափոխումների հարցը արծարծվել է դեռեւս դարասկզբին եւ ոչ թե 20-ական թթ. եւ այն բնավ էր «կոմունիստական» կամ «բոլշեւիկյան» չէ, ինչպես են որոշ մտավորականներ եւ այս եղանակով փորձում «թող փչել» մարդկանց աչքերին: Ուրեմն, այս շրջանում արդեն ուղղագրական փոփոխությունների հարցը գրվում էր, քանի որ կար տրամաբանական անհրաժեշտություն, եւ նկատելի էին զգալի, նույնիսկ էական հակասություններ գրության եւ արտասանության միջեւ: Եվ ահա 1913 թ. Մ. Աբեղյանը ներկայացնում է ուղղագրական նոր համակարգի նախագիծը, որը եւ քաղաքական իրավիճակային տարբեր պատճառներով պաշտոնական լուծում չի ստանում մինչեւ 1922 թ.:

Հայտնի է, որ լեզուն ընդհանուր համակարգ է իր բոլոր մակարդակներով, իսկ գրությունը նրա բաղադրիչ տարրերից մեկը: Ոչ մի անհատ չի կարող փոխել լեզվական ընդհանուր համակարգը, առանց պատմական անհրաժեշտության, առանց գիտական հիմնավորման, ուստի եւ ուղղագրական փոփոխությունները ոչ մեկի քմահաճույքը չեն եղել եւ չեն կարող լինել, որքան էլ նա լինի նշանավոր, վաստակաշատ գիտնական: Այնպես որ ոմանց այսօրվա պնդումները ուղղագրական փոփոխությունների

մասին մեզ համար զարմանալի են եւ գիտական, եւ գործնական, եւ մասնավաճ ուսուցողական առումով: Չարմանալին դեռ քիչ է, նույնիսկ զայրացուցիչ է: Ինչո՞ւ: Նախ՝ այն գիտական եւ գործնական ոչ մի հիմնավորում չունի: Գրութիւնը հետեւում է արտասանութեանը եւ փոխվում է միայն այն դեպքում, երբ փոխվում է արտասանությունը: Այսպէս՝ ո՞ւմ է պետք բառավերջի *յ* հնչյունը *ա* եւ *ո* ձայնավորներից հետո, երբ այն չի արտասանվում (ծառայ, երեկոյ, պողոտայ, յետոյ եւ այլն), ո՞վ չի զգում, որ այն բացարձակապէս ավելորդ է, ոչ մի իմաստ չի արտահայտում, ինչո՞ւ զրեմք: Ոչ ոք չի կարող պնդել եւ համոզել, որ աշակերտի համար ավելի հարմար է գրել բառավերջի *յ*-ն, բայց չարտասանել: Կամ եթե մենք երեխային պետք է ստիպենք, որ նա գրի *յօղուած*, *յետոյ* եւ արտասանի *հողված*, *հետո*, ի՞նչ կստացվի. ինչո՞վ է դա օգտակար, շահավետ, ի՞նչ է, դրանով աշակերտի գրագիտությունը կբարձրանա՞, թե՞ լրիվ հակառակը: Մենք չենք ուզում մասնագիտական մանրամասների մեջ մտնել, պարզապէս անհասկանալի է եւ հետաքրքիր իմանալ, թե ի՞նչ են ուզում մեր հարգարժան ընդդիմախոսները: Ինչու՞ փոխենք գրությունը, երբ չենք փոխում արտասանությունը, չէ՞ որ դրանք հիմնականում միասնական են, մասնակի բացառություններով: Ի դեպ, այդ բացառությունների մասին եւս: Ո՞ր դեպքում են այսօր աշակերտները կամ ուսանողները շատ տառասխալներ թույլ տալիս, պարզ է. այն դեպքում, երբ համակարգում կան շեղումներ, կան գրության եւ արտասանության տարբերություններ: Այսպէս՝ այսօրվա մեր գրական լեզվում կան գրության եւ արտասանության որոշ շեղումներ. *բ* եւ *ղ* բաղաձայններից հետո, *բ*, *գ*, *դ*, *ծ*, *ջ* ձայնեղ բաղաձայնները գրվում են իբրեւ այդպիսին, բայց արտասանվում են որպէս շնչեղ խուլեր՝ *փ*, *ք*, *ց*, *ջ*: Յենց այստեղ էլ գրության ժամանակ աշակերտը սխալվում է, իսկ պատկերացնում էք, ինչ կլինի մեր վիջակը, եթե մենք այսօրվա արտասանությամբ անցնենք հին ուղղագրության: Ես, չգիտեմ, թե այսօր մեր ժողովրդի ո՞ր տոկոսն է գրագետ, համենայն դեպս այն մեծ տոկոս չի կազմում նույնիսկ այս պայմաններում, իսկ ի՞նչ կստացվի, եթե փոխենք այս ուղղագրությունը. կլինի համատարած անգրագիտություն: Արդյոք այս մասին մտածել են մեր հարգարժան պարոնները:

Հին (կամ ինչպէս իրենք են պնդում «դասական») ուղղագրության անցնելու կողմնակիցները բերում են որոշ «փաստարկներ», որոնք հաճախ ծիծաղելի են, եթե ոչ զավեշտական: Իբր թե այսօր ողջ սփյուռքահայությունը կանգնած է ոչնչացման, կործանման եզրին, եւ եթե ուղղագրությունը փոխենք, մեր ժողովրդի այս հատվածը լիովին կփրկվի այս աղետից: Երանի թե այդպէս լինէր: Կամ՝ իբր թե, եթե անցնենք հին ուղղագրության, ապա մեր ժողովրդի լայն զանգվածները հնարավորություն կունենան տիրապետելու հին հայերենին՝ գրաբարին եւ միջին հայերենին: Շատ միամիտ դատողություն. եթե մարդը չգիտի, թե ինչ են նշանակում գրաբարյան *տիվ*, *գեղջ*, *քեռ* բառերը կամ բառաձեւերը, ինչպէս էլ գրենք՝ միեւնույնն է՝ նա այդպէս էլ դրանք չի իմանա, մինչեւ չտիրապետի գրաբար լեզվին:

Հաջորդ հարցը գրության միասնականության պահանջն է: Անշուշտ, մենք բոլորս էլ կողմնակից ենք միասնականության, բայց ինչպէ՞ս: Ասենք թե մի պահ փոխեցինք ուղղագրությունը, իսկ արտասանությունը, քերականական, բառապաշարային բազմաթիվ իրողությունները, որոնք հենված են տարբեր համակարգերի վրա: Եվ վերջապէս, հասնենք միասնականության, բայց ինչը ինչին միացնենք: Հայ ժողովրդի կենտրոնը Հայաստանի Հանրապետությունն է՝ իր պետական լեզվով, որը արդի դրական հայերենն է՝ իր քերականական ողջ համակարգով եւ, բնականաբար, նաեւ իր ուղղագրությամբ: Եթե ուզում ենք միասնականություն, ուրեմն պետք է լեզվական այս համակարգը ընդունենք, այս գրությունն ու այս արտասանությունը: Եվ եթե լեզվի օրենքում նշված է, թե մեր պետական լեզուն հայերենն է, որը ինչ-ինչ անհատների մեղքով եւ ոչ միամտաբար այսպէս է ձեւակերպվել, անպայման այս հարցում եւս պետք է որոշակի ճշգրտում մտցվի, այն է՝ ՀՀ պետական լեզուն ոչ թե հայերենն է ընդհանրապէս (որն իր մեջ ենթադրում է նաեւ հայերենի բոլոր

դրսեւորումները, ընդհուպ միջեւ բարբառներ), այլ գրական արեւելահայերենը, քանի որ հայ ժողովրդի կենտրոնը, Հայաստան աշխարհի կենտրոնը Հայաստանի Հանրապետությունն է՝ իր ողջ պետական կառուցվածքով, իր արեւելահայ գրական լեզվով, որը եւ ունի իր համալսարանական ուղղագրությունը՝ արդի արեւելահայ ուղղագրությունը:

Մեր յարգելի ընդդիմախոսները նույնիսկ դժգոհում են, որ լեզվաբանները զբաղվում են ուղղագրության հարցերով, նույնիսկ զարմանում, որ այս մասին նարնք հողվածներ են տպագրում եւ գտնում են, որ ուղղագրությունը լեզվաբանների մենաշնորհը չէ: Անշուշտ, ոչ մի լեզվաբանի մտքով էլ չի անցնում, որ ուղղագրությունը կարող է որեւէ մեկի մենաշնորհը լինել, բայց որ ուղղագրական ցանկացած փոփոխություններ պետք է գիտականորեն, ուսուցողական-մանկավարժական առումներով հիմնավորված լինեն, կարծում ենք, ոչ ոք չի առարկում: Իսկ դա, որքան էլ մեր հարգելի պարոն ընդդիմախոսները չկամենան, կարծում ենք, որ առաջին հերթին լեզվաբանների գործն է, նրանց «փեշակը»: Լեզվաբանները կարող են շատ թե քիչ հիմնավորեն, գիտականորեն համոզել կամ մերժել ուղղագրական որեւէ քնահաճ «բարեփոխումներ»՝ իհարկե հենվելով գրության գործնական կիրառությունների վրա:

Անվիճելի է, որ ուղղագրության հարցը ընդհանուր, համաժողովրդական հարց է, որը բոլորին է հետաքրքրում եւ մտահոգում, բայց առաջին հերթին, պարզ է, հայ մտավորականներին՝ անկախ մասնագիտությունից, գիտնականներին, գրողներին արվեստագետներին, բայց առաջին հերթին նրանց, ովքեր զբաղվում են դպրոցական, բուհական ուղորտներում, ընդհանրապես կրթության ուղորտում, քանի որ նրանք են ամեն օր առնչվում եւ նրանք գիտեն, թե ինչպիսի դժվարություններ կան ուղղագրությունը ուսուցանելու գործում, մանավանդ եթե այն զգալիորեն հեռանում է արտասանությունից: Առանց այդ էլ դժվար է այսօր երեխաներին ուղղագրություն սովորեցնել: Փաստե՛ր: Խնդրեն, աշակերտը տասը տարի սովորում է դպրոցում, գալիս է բուհ, բայց անվիճելի է, որ նրանցից շատերը բացարձակապես գրագետ չեն եւ ստիպված ուղղագրական կանոնները սովորեցնում են բուհերում: Իսկ հիմա պատկերացրեք, եթե մենք անցնենք հին ուղղագրությանը, կտիրի համատարած, բացարձակ անգրագիտություն: Արդյոք չե՞ն մտածում մեր հարգելի ընդդիմախոսները, թե այսօր քանի՞ ուսուցիչ կունենանք մեր դպրոցներում. ովքեր կկարողանան դասավանդել եւ ուսուցանել այդ «դասական» կամ ավանդական ուղղագրությունը, ընդհանրապես քանի՞ անհատ կգտնվի ողջ Հայաստանում, որ կարողանա ճիշտ, անթերի գրել մեր իսկ ընդդիմախոսների կողմից հորջորջված «մեսրոպյան» ուղղագրությամբ: Նույնիսկ հին ուղղագրության մոլի կողմնակիցների գրություններում ուղղագրական բազմաթիվ տառասխալներ են հանդիպում, իսկ ի՞նչ ասենք ուրիշներին:

Մեր հարգելի բարեկամները, որոնք համառորեն առաջարկում են փոխել այսօրվա ուղղագրությունը, եղե՛լ են արդյոք դպրոցներում, բուհերում. գրուցե՛լ են աշակերտության, ուսանողների հետ, լսե՛լ են նրանց կարծիքները: Մի՞թե կարելի է այդքան անտեղյակ լինել ժողովրդի, հասարակության լայն խավերի պատկերացումներից, նրանց վերաբերմունքից:

Իսկ որտեղի՞ց են գալիս ուղղագրության փոփոխության այս միտումները, ի՞նչ նպատակներ են հետապնդում դրանք:

Նախ՝ այս «գաղափարախոսությունը» ծնվեց 90-ական թթ. սկզբների ազգային զարթոնքի, ազգային վերելքի տարիներին, երբ բազմաթիվ առողջ, ճիշտ, գնահատելի գաղափարների հետ առաջ եկան նաեւ որոշ մերժելի երեվոյթներ, երբ ամեն մի հին «կոմունիստական» էր, ուրեմն նաեւ մերժելի: Սա այն շրջանն էր, երբ որոշ ծայրահեղականներ, սոզորված «հեղափոխական» գաղափարներով, ցեխ էին շարտում ոչ միայն Ն.Գոգոլի եւ Ա.Չեխովի արձաններին, այլեւ Խ.Արփյանի եւ Ե.Չարենցի: Ինչպիսի կեղծ հայրենասիրություն, ցուցամոլություն, որն ինչ-որ տեղ նույնիսկ վտանգավոր,

ծայրահեղ հետեւանքներ ունեցավ: Նույն մերժողական վերաբերմունքը ստեղծվեց նաեւ գործող ուղղագրության նկատմամբ, որպէս հնի, արդեն իսկ իր դարն ապրած «բոլշեւիկյան» ուղղագրության:

Այնուհետեւ, մեր որոշ սփյուռքահայ մտավորականներ, որոնցից ոմանք այսօր մեզանում զանազան պաշտոններ են զբաղեցնում կամ հավակնում են ապագայում որոշ «աթոռների» եւ չեն տիրապետում արեւելահայ կամ ինչպէս իրենք են հաճախ ձեւակերպում՝ «աբեղյանական», «բոլշեւիկյան» ուղղագրությանը, հայտնի պատճառներով եւ նպատակներով ամեն ինչ անում են, զուցեւ միջոցներ չեն խնայում փոխելու մեր պետական լեզվի ուղղագրությունը եւ առաջարկում են մի ուղղագրություն, որը ողջ սփյուռքում որոշակի միասնական համակարգ չունի, քանի որ շեղումներն զգալի են, եւ սփյուռքում լույս տեսնող ոչ մի թերթ այսօր նույն ուղղագրությամբ չի գրում, եւ նույնիսկ կարելի է ասել, որ այսօր սփյուռքի ամեն մի լրագիր կամ ամսագիր ունի իր ուղղագրությունը, որն իր որոշ համակարգով զգալիորեն տարբերվում է հին կամ ավանդական ուղղագրությունից:

Մենք ուզում ենք մի հարց եւս ճշտել մեր հարգելի ընդդիմախոսների հետ՝ թե՛ աշխարհի տարբեր հատվածներում ապրող հայերի ո՞ր տոկոսը, ո՞ր ուղղագրությամբ է գրում: Բերենք միայն մի փաստ, որ մատնանշեց մեր Ֆրանսահայ մտավորականներից մեկը: Ֆրանսիայում բնակվող հայության միայն 20-25 տոկոսն է խոսում (կամ զուցեւ գրում) հայերեն: Այս դեպքում արդեն այն մնացած 75 տոկոս հայության համար ի՞նչ նշանակություն ունի, թե ով ո՞ր ուղղագրությամբ է գրում, եւ կամ մի՞թե մոռանում ենք այս վերջին տարիներին Հայաստանից գնացած մոտ մեկ միլիոնի հասնող մեր հայրենակիցներին, որոնք անկասկած տեղերում չեն փոխելու իրենց իմացած ուղղագրությունը եւ ցանկության դեպքում էլ չեն կարող փոխել: Այս «նորարարներից» մի քանիսն էլ, կարծում ենք, որ զուտ յուրօրինակության մղումից են այդ անում, պարզապէս ուզում են օրիգինալ երեւալ, տարբերվել մյուսներից, շրջապատի ուշադրությունը բեւեռել իրենց վրա, ստեղծել հակադրվելու շարժառիթներ եւ ուրիշ ոչինչ:

Նկատելի է նաեւ, որ տարբեր բնագավառների ու մասնագիտության համարյա բոլոր գիտնականները, գրողներ ու արվեստագետներ, ովքեր որեւէ առիթ են ունեցել անդրադառնալու այս հարցերին, անվերապահորեն նույն բանն են պնդում, նույնը հիմնավորում այսօր ավանդական ուղղագրության անցնելը անհեթեթություն է, անիմաստ, ուղղակի ավելորդ մարզանքներ բացի մի քանի մտավորականներից, եւ թող ներվի ասել՝ որոշ ջերմոցային գիտնականներից, ովքեր կապ չունեն դպրոցի, բուհի, ընդհանրապէս մանկավարժական գործունեության հետ եւ չեն պատկերացնում լեզվի ողջ համակարգը, այդ թվում նաեւ՝ ուղղագրության ուսուցման ողջ գործընթացը՝ իր մանրամասներով, իր դժվարություններով ու բարդություններով: Լեզվի հարցում առանձին մտավորականների կամայականությունները հասցրին այն բանին, որ նույնիսկ ՀՀ Սահմանադրության մեջ որպէս պետական լեզու է ներկայացվում հայերենն ընդհանրապէս:

Այս ձեւակերպումից բխում է, որ պետական լեզվի գործառույթ կարող է ունենալ հայերենն իր բոլոր արտահայտություններով (գրաբար, միջին հայերեն, արեւելահայերեն, արեւմտահայերեն եւ այլն), մինչդեռ պարզ է, որ ՀՀ պետական լեզուն արդի գրական արեւելահայերենն է, որով գրված են Սահմանադրությունը, բոլոր օրենքներն ու օրենսգրքերը, պաշտոնական, դիվանագիտական բոլոր փաստաթղթերը: Այս հարցում եւս պետք է լինի որոշակի հստակություն եւ միասնականություն, քանի որ որոշ մտավորականներ, նույնիսկ ամբիոնից հայտարարում են, որ այսօր մեր պետական լեզուն կարող է լինել ոչ միայն արեւելահայերենը, այլեւ արեւմտահայ գրական լեզուն, նույնիսկ՝ գրաբարը, մի բան, որ պարզապէս զավեշտական է:

Այս առումով անհրաժեշտ է վերանայել լեզվի մասին օրենքի այն ձեւակերպումը, որտեղ նշվում է, որ Հայաստանի Հանրապետությունը նապատում է հայերենի ուղղագրության միասնականացմանը: Նշված

սահմանումը եւս որոշակի սողանքը է թողնում թյուր մեկնաբանությունների համար, հարցին տալիս քաղաքական որոշակի ուղղվածություն:

Թող չստացվի այն տպավորությունը, թե մեզանից որեւէ մեկը դեմ է գրաբարի կամ արեւմտահայերենի ուսուցմանը. մեր բուհերում վաղուց ի վեր դասավանդվում է արեւմտահայերենը, պետք է ավելացնել ժամաքանակը, ամեն կերպ նպաստել, որ յուրաքանչյուր հայ լավ տիրապետի արեւմտահայերենին, իմանա նրա ուղղագրությունը, նույնը հավասարապես վերաբերում է նաեւ մեր հարգելի արեւմտահայ հայրենակիցներին: Իսկ ինչ վերաբերում է լեզուների միասնականացմանը, կարծում ենք, որ դա բացարձակ ֆիկցիա է, որովհետեւ որքան էլ դրանք միեւնույն լեզվի առանձին տարբերակներ են, այնուամենայնիվ նրանցից յուրաքանչյուրն ունի իր համակարգը, իր ձեւաբանական, շարահյուսական, իր արտասանական եւ բնականաբար նաեւ իր ուղղագրական համակարգը, նրանցից յուրաքանչյուրին յուրահատուկ լեզվական օրինաչափություններով:

Բայց ի՞նչն է խանգարում, որ այս երկու համակարգերը, որպես մեր լեզվի դրսեւորման հարստություններ զարգանան կողք-կողքի, այդ լեզուներով ստեղծվել են գեղարվեստական լավագույն նմուշներ, արվեստի, մշակույթի լավագույն գործեր: Ի՞նչ վատ է, որ ունենք Վարուժան, Մեծարենց, Սիամանթո, մյուս կողմից՝ Վ.Տերյան, Յ.Թումանյան, Ե.Չարենց՝ իրենց գեղեցիկ ու պատկերավոր լեզվով, բանաստեղծական բարձր արվեստով: Իսկ հետագայում, երբ արդեն միասնական պետական լեզվի անհրաժեշտություն ստեղծվի, այս դեպքում, խնդրեն՝ արեւելահայ գրական լեզուն՝ իր բոլոր դրսեւորումներով, այդ թվում նաեւ՝ իր արտասանական-ուղղագրական համակարգով կարող է լավագույնս ծառայել որպես միասնական, պետական լեզու: Այնպես որ ուղղագրական կարգի եւ ոչ մի փոփոխություն մեզ անհրաժեշտ չէ, եւ կարծում ենք, որ պետք չէ դիմել ծայրահեղությունների, մասնավաճճ, որ հենց իրենք՝ սփյուռքի մտավորականներից շատերը, բազմիցս նշել են, որ երեւմտահայ եւ արեւելահայ ուղղագրությունները առանձնապես շատ մեծ տարբերություններ չեն դրսեւորում եւ հիմնականում դժվարմատչելի «հնչյունային տառաշրջության» պատճառով է: Սփյուռքում արեւելահայ բարեփոխված ուղղագրությունն ընդունում են ոչ թե հենց այնպես, քմահաճորեն, այլեւ գիտակցաբար, մտածված ու տրամաբանորեն, ուստի եւ «այս նոր ուղղագրության մասին արտասահմանի մեջ ցարդ ուրտահայտված են միմիայն անոնք, որոնք առարկություն ունին այդ ուղղագրության մասին, իսկ լուռ մնացած են բոլոր անոնք, որ համաձայն եղած են անոր: Այս վերջիններուն թիվը կարծվածին չափ փոքր չէ, բայց իրենց պահած լռությունը պատճառ հաղիսացած է, որ աննկատ մնան» (Ռ.Ենպեճյան, Ստերիմ գրույց ուղղագրության հարցի շուրջ, Յալեպ, 1970):

Ուղղագրության հետ առնչվող մի հանգամանք եւս. վերջին ժամանակներս որոշ պաշտոնյա, բայց ոչ «արհեստավարժ» այրեր փորձում են մասնակի «շտկումներ» կատարել ուղղագրական համակարգում. առաջարկում են այբուբենում ավելացնել ւ տառը, փոխել եւ, **ու** տառերի գրության ձեւը՝ **ւ**-ը (վյուն) առանձնացնելով **ե** եւ **ո** ձայնավորներից: Մանրամասն չանդրադառնալով խնդրո առարկա հարցին, նշենք, որ դեռեւս միջին դարերում **եւ**-ը իբրեւ առանձին տառ գործածական է եղել (ե-ի եւ ւ-ի միացումով) եւ նպաստել հայերենի գրության եւ արտասանության մաքսնական սկզբունքներին, ուստի եւ ինչպես նկատել է պրոֆ. Ալ.Մարգարյանը «նման պահանջը չի բխում ժամանակակից հայոց լեզվի ոգուց, հակասում է նրա ուղղախոսական եւ ուղղագրական օրինաչափություններին... Եւ-ը պատմականորեն առաջ եկած ինքուրույն նշագիր է, որով երկու, երբեմն նաեւ երեք հնչյուններ են արտահայտվում՝ դրսեւորելով դրանց համապատասխան արտասանական-ուղղախոսական եւ ուղղագրական օրենքներ ու կանոններ»:

Նույնը վերաբերում է նաեւ **ու**-ի անջատ գրությանը:

Նշված տառերի բաղադրիչների տարանջատումը ծայրահեղությունների է հասցնում հատկապես մեր այսօրվա խառնաշփոթ, կամայական

տողադարձումների ժամանակ, երբ մամուլի էջերում տողադարձումների ժամանակ z-բաղադրիչը առանձնացվում է բառից իբրև առանձին միավոր եւ տեղափոխվում է հաջորդ տող (ինչպես՝ ակներե-ւ, ակնառու-ւ, լուսատու-ւ եւ այլն):

Ինչեւ, տեղին էին Մ.Աբեղյանի այն կանխատեսումները, որոնք նաեւ խիստ այժմեական են. ներկա ուղղագրությունը աղմուկ եւ դժգոհություն կառաջացնի հատկապես «փախստական էքսմիցրների, ազգային ջոջերի, կղերական վեղարավորների, տիրացու վարժապետների եւ այլ խախտամիտների շրջանում»:

Հին ուղղագրությանն անցնելու այս մոլուցքը այսօր հանգիստ չի թողնում նաեւ մեր սփյուռքահայ որոշ գործիչներին, այդ թվում նաեւ հոգեւորական բարձրաստիճան այրերին: Այս առիթով պատեհ չէ եւ անտեղի միջամտության մի փորձ ենք համարում Մեծի Տան Կիլիկիո Արամ Ա-ի պատասխան նամակը ուղղված՝ Հայագիտության ինքնաստեղծ «Կաճառի» նախագահին, ուր բաժանելով նշված որոշ «կաճառականների» մտահոգությունն ու ընդվզումը, միեւնույն ժամանակ կրկնում է բազմիցս չարչրկված «տեսությունը», որ իբր «Մեսրոպյան ուղղագրության վերականգնումը հրամայական անհրաժեշտություն է թե՛ մեր ժողովրդի միասնականությունը ամրապնդելու եւ թե՛ մեսրոպյան լեզուն ավելի բյուրեղացնելու իմաստով: Կհավատանք, որ նաեւ այս է ողջ սփյուռքի մոտեցումը այս խիստ հրամայական հարցին»:

Նկատելի է, որ հարգարժան Կաթողիկոսի վերջին պնդումը այնքան էլ իրական չէ, եւ միայն ու միայն փաստերի որոշ անտեղյակության հետեւանք է:

## The Orthography is not a matter of personal enjoyment

Dr. L. K. Yezekian

### Summary

Dr. Yezekian is one of many other Scientists of Armenia who supports the modern orthography of the armenian language. He gives a realistic picture of the armenian language usage in Diaspora, and in the differend fields of it in Armenia. He tries to answer all questiones raised by the persons who do not accept the modern method of writing and insist on the old method (in mistake named Mesropian which is more difficult to learn).

شیوه نگارش بازیچه امیال شخصی نیست

دکتر ل. ک. یزکیان

چکیده مقاله

دکتر یزکیان از طرفداران شیوه جدید نگارش ارمنی است و کلیه نظرات مخالفان را مردود می داند. در این مقاله وی سعی می کند کلیه پرسشهای مطرح شده را به نحوی پاسخ بگوید. همچنین سعی می کند ریشه های اصلی طرح تفسیر شیوه جدید نگارش و بازگشت به شیوه قدیمی را (که آموزش آن مشکل تر است) شناسایی کند.

## Սաադին հայ միջնադարյան գրականության մեջ

Բ. Լ. Չուգասյան

*Ինչի՞նչ են պետք պոկված վարդերն այս զառամ,  
Վերցրու մի թերթ «Գոլեսթանից» անթառամ,  
Հինգ կամ վեց օր կապրի վարդը հազիվհազ,  
«Գոլեսթանը» մինչդեռ կապրի հանապազ:*

Հիրավի ճիշտ է կանխատեսել Շիրազի անմահ բանաստեղծ Սաադին իր ստեղծագործության ապագան: Դարեր են անցել նրա այս տողերը գրվելուց ի վեր, բայց «երջանկության եւ տխրության բանաստեղծի», ինչպես բնորոշել է նրան Իսահակյանը, երգերը չեն թռչնել եւ այսօր էլ շնչում են թարմությամբ, զերում իրենց անմիջականությամբ, վարակում խոր մարդասիրությամբ ու ժողովրդայնությամբ եւ հաճախ զարմացնում բանաստեղծի հակասական կենսափիլիսոփայությամբ:

Շեյխ Մուլեհեդդին Սաադին եղել է այն պարսիկ գրողներից, որոնց ստեղծագործությունները անցել են ողջ միջնադարով, ենթարկվել ժամանակների քննությանը եւ հասել մեզ պահպանելով իրենց բույրն ու կենսահաստատ գեղեցկությունը:

Հայ միջնադարյան գրականությունը, որը սերտ կապեր ու շփումներ է ունեցել հեռու ու մոտ շատ գրականությունների հետ, կարող էր արդյո՞ք անհաղորդ մնալ Սաադիի քանքարին, ժողովրդական մեծ հմայք ունեցող նրա երկերին:

Հայտնի է, որ հայ-իրանական-պարսկական գրական փոխհարաբերությունների մի նոր փուլ սկսվում է հայ տաղերգության սկզբնավորումով, հարաբերություններ, որոնք մեր բանաստեղծության մեջ իրենց ուրույն դրսևորումն ունեցան Մերձավոր արեւելքում ու միջին Ասիայում տարածված պարսկական բանաստեղծության լեզվա-արտահայտչական հնարանքների անկաշկանդ օգտագործումով: Բայց մեր տաղերգուները հականե հանվանե ո՞ր պարսիկ գրողների հետ են առնչվել, նրանց հետաքրքրության ու ծանոթության սահմանները ինչպիսի՞ք են եղել, այստեղ արդեն փաստերը չափազանց ժլատ են:

Սաադիի հետ հայ գրականության ծանոթության վաղ շրջանը մինչեւ վերջին ժամանակներս համարվում էր XIX դարի կեսը, բայց Գեւորգ Դպիր Պալատացու (1737-1812) պարսկերեն-հայերեն բառարանի քննությունը երեւան բերեց նրա թարգմանությունները պարսիկ դասական գրողներից, այդ թվում նաեւ Սաադիից, որոնք պետք է կատարված լինեն 1795-1800 թվականներին(1):

Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրերը նոր տվյալներ են ընձեռում Սաադիի հետ մեր գրականության առնչությունները ավելի վաղ ժամանակներ տանելու համար: Այդպիսի արժեքավոր ձեռագրերից է No 5954 մատյանը, որ նախապես տաղարան է եղել եւ հետագայում զանազան բովանդակությամբ հավելումներ կրել: Այս նյութերից կարելի է ենթադրել, որ ձեռագիրը պատկանելիս է եղել ինչ-որ գործարար մի մարդու, թերեւս վաճառականի, որը տաղարանի դատարկ էջերում գրանցել է իրեն անհրաժեշտ որոշ տեղեկություններ, անգամ առանձին քաղվածք 1776 թ. սեպտեմբերի 17-ի «Իռլանդու կազեթից»: Մի այլ հիշատակագրություն պատկանում է 1774 թվականին (էջ 127-բ): Հավելումների այս բաժնում հայատառ պարսկերենով կան բազմաթիվ ժողովրդական ասույթներ, աղոթքներ ու փառքեր, ինչպես նաեւ մի քանի քառյակներ ու բեյթեր:

No 5954 ձեռագրի մեջ 112-ում «Պարսից պէթեր, առակն է պարսերէն» մակագրութեան ներքո բերված է հետեւյալ քառյակը եւ նրա գրաբար թարգմանութիւնը.

Չի դամ տիւար հիւնմաթիրա,  
Քի պաշաթ չիւն թու փիւշթիպան.  
Չի պաթ էգ մէվճի պէիրանրա,  
Քի պաշաթ Նույի քիւշթիպան:

Չի՞նչ հոգ ունին աշակերտք քո,  
Մինչ ունին գրեզ զգաստ դէտ.  
Չի՞նչ արասցեն ալիք ծովու,  
Մինչ ունին գրեզ նաւապետ:

Այս քառյակը քաղված է Սաադիի «Գուլեսթանի» հայտնի նախերգանքից, որի պարսկական բնագիրն ըստ 1348/1929-30 թթ. բեռլինյան հրատարակութեան հետեւյալն է.

Բառացի թարգմանութիւնը.

Ինչ հոգ ունի պարիսպը հավատի,  
Երբ կա քեզ պես պաշտպան.  
Ինչ վախ [ունի](2) ծովի ալիքից այն [մարդը],  
Որ ունի Նոյի [պետ] նավապետ (3):

Ինչպես տեսնում ենք միջնադարյան թարգմանութիւնը բնագրից այնքան էլ չի հեռացել: Անհամաձայնութիւնները մի դեպքում գալիս են միեւնոյն բառի տարբեր առումների օգտագործումից, մյուս դեպքում թերեւս բխում են թարգմանչի միտումից՝ քառյակի իմաստը բանաստեղծորեն ճիշտ վերարտադրել:

Այստեղ, սակայն, մեզ համար կարեւորը ոչ թե թարգմանութեան հարազատութեան հարցն է, այլ քառյակի թարգմանութեան առկայութիւնը հիշյալ մատյանում, որի ժամանակը ձեռագրում հիշատակված 1776 թվականից շուտ լինել չի կարող:

Իսկ ո՞վ է եղել թարգմանիչը:

No 5954 ձեռագիր էջ 112-ում որտեղ ընդօրինակված է քառյակը, կա հետեւյալ հիշատակագրութիւնը. «Քութուր անուանեալ Պետրոս վարդապետի շարադրեալ քարոզգրքին թղթահամար 198»(4):

Արդոյ՞ք որեւէ կապ կա այս հիշատակագրութեան եւ քառյակի միջեւ: Առայժմ դժվար է որոշակի պատասխան տալ: Հայտնի է միայն, որ Պետրոս Բ Քյութուր անունով կրօնական մի գործիչ է եղել XVIII դարի առաջին կեսին եւ 1748-1749 թթ. կաթողիկոսական գահի վրա է եղել (հավանաբար ոչ օրինական կարգով): Նա սպանվել է Ջահուկի մի վանքում ավազակների հարձակման ժամանակ 1750 թվականին(5): Գրականութեան մեջ հիշատակվում է նաեւ Պետրոս վարդապետ Քութուր անվանվող մի տաղասաց, որ ապրել է նորից XVIII դարում եւ ամենայն հավանականութեամբ նույն Պետրոս Քյութուրն է:

Քառյակի թարգմանչի անձնավորութեան բացահայտման համար ուշադրութեան արժանի է պարսկերեն քառյակի հայկական տառադարձութիւնը, որը հիշեցնում է արեւմտահայ պարսկագետների արտասանութիւնը՝ ավելի մոտ օսմանյան թուրքերենի հնչյունական համակարգին: Այսպես. քառյակում պարսկերենի ձայնեղները բառասկզբում խլացված են. օրինակ՝ բ( ) > պ, դ ( ) > տ, ք ( ) > ճ (պաշաթ, տիւար, մէվճ), իսկ ձայնավորներից a-ն տառադարձված է ա, e-ն՝ ի եւ o-ն՝ իւ: Քառյակին



հաջորդող մատյանի մյուս էջերում գտնվող հայատառ պարսկերեն մյուս նյութերը տառադարձված են ավելի հարազատորեն պահպանելով պարսկական ժողովրդական արտասանության հնչյունները, ինչպես՝ բ ( ) >

բ, դ ( ) > դ, գ ( ) > գ (բըմունի, դաստ, սագ):

Քառյակի մեջ կիրառված կուռ տառադարձությունն ու նրա հայերեն բանաստեղծական զեղեցիկ վերարտադրությունը ենթադրել է տալիս արեւմտահայ բանաստեղծ-թարգմանիչ, մի գուցե հենք ինքը Պետրոս Քյուրյուրը, որը այնքապի էր եւ երկար տարիներ Պոլսում եղել էր կաթողիկոսական նւիրակ:

Արդ, եթե ենթադրելու լինենք, որ Պետրոս Քյուրյուրն է կատարել թարգմանությունը, ապա քառյակի թարգմանության ժամանակը պետք է դնել նրա նահվան թվականից (1750) առաջ:

\* \* \*

Սաադիի «Գոլեսթանի» հետ հայ գրականության ավելի վաղ մի ծանոթության նասին վերջերս մատնացույց է արել բանասեր Միհրդատ Թիրյաքյանը(6): Հայերեն Աստվածաշնչի տպագրության 300-ամյակին նվիրված «Սիոնի» հատուկ թվում Թիրյաքյանը ուշադրություն է դարձրել Ղուկաս Դպիր Վանանդեցու «Գանձ չափոյ» գրքի 1699 թ. հրատարակության հիշատակարանի նասը կազմող հայատառ պարսկերեն մի երկատողի (բեյթի) վրա: Երկատող, ինչպես ճշտորեն նշել է Մ.Թիրյաքյանը քաղված է Սաադիի «Գոլեսթանից», եւ մեջ է բերված հետեւյալ տառադարձությամբ:

Օմր բարՖ ասք՝ վա աֆթար թամուզ  
Անդաքի մանդ վա խօջա դօռահ հանուզ(7):

Պարսկերեն բնագրում երկատողը այս տեսքն ունի.

(8)

Մ.Թիրյաքյանը հետեւյալ կերպ է ընթերցում եւ թարգմանում.

Օմր բարՖ ասք օ աֆթար թամուզ  
Անդաքի մանդ օ խաջէ դըրրահ հանուզ:

Կյանքը ծյուն է հուլիսի արեւին տակ,  
Շատ քիչ մնաց աղան (տերը) դեռ անհոգ է:

Հարգելի բանասերի այս հետաքրքիր դիտումը մեզ թելադրեց պրպտելու Ղուկաս Դպիր Վանանդեցուն Երեւանում առկա նաեւ մյուս հրատարակությունները եւ պարզվեց, որ հայ տպագրության այդ երախտավորի անմիջական մասնակցությամբ Ամստերդամում Թոմա Վանանդեցու տպարանից լույս տեսած երկու գրքում եւս հայատառ պարսկերենով քաղվածքներ կան Սաադիի նույն երկից: Այսպես, «Բնաբանութիւն իմաստասիրական կամ տարերաբանութիւն» (1702 թ.) գրքի 71-րդ էջում տպագրված է հայատառ պարսկերենով «Գոլեսթանի» Ներածության առաջին իսկ բառերին հաջորդող հետեւյալ հատվածը.

Հար նաֆասի, քի ֆրու միրօվադ՝ մօմնադ հեաթ աստ, վա չուն բար միայեադ, մօֆառահ գաթ:  
Փաս դար հար նըաֆասի դու նըամաթ մօվջուդ աստ, վա բար հար նըամաթի շուքրի վաջուբ(9):

Բերենք «Գոլեսթանի» պարսկերեն բնագրի համապատասխան հատվածն ու նրա բառացի թարգմանությունը:

(10)

Յուրաքանչյուր շունչը, որ ներս է գնում, երկարացնում է կյանքը, եւ երբ դուրս է գալիս զվարթացնում է եւթյունը:

Յետեւաբար յուրաքանչյուր շնչուն երկու բարիք կա, եւ յուրաքանչյուր բարիքի համար մի փառաբանություն է անհրաժեշտ:

Մյուս գիրքը, որ նույնպէս հայատառ պարսկերեն հատված ունի, «Յոզնադիմի աստուածաբանական, բարոյական եւ քաղաքական իրողութեաց սահմանք» երկասիրությունն է (1704 թ.): Այս գրքի 47-րդ էջից մինչեւ 58-րդ էջը տպագրված է Ղուկաս Վանանդեցու թարգմանած արիստոտելի «Յաղագս առաքինութեանց եւ չարութեանց» երկը, որից անմիջապէս հետո բերված է «Գոլեսթանի» ներածության այն քառյակը, որտեղ բանաստեղծը պատկերավոր կերպով իր երկի հավերժությունն է կանխատեսում, քառյակ, որը սույն հոդվածի համար բնաբան ենք ընտրել.

Բը չի քար այեադո զըզիւ Թըբաղի,  
Ազ գիւլըստան ման բըբօր վարաղի,  
Գիւլ հըրամին փէնջ ռուզ վա շէշ բաշէդ  
Վը ին գուլըսթան հըրամիշա խօշ բաշէդ:

Ահա եւ քառյակի պարսկերեն բնագիրը եւ բառացի հանրել թարգմանությունը.

(11) .

Ի՞նչիդ է պետք Վարդի մի թերթը,  
Պոկիր մի թերթ իմ «Գոլեսթանից».  
Վարդը այս հինգ վեց օրը [կապրի]  
[իսկ] այս «Գոլեսթանը» հավերժ հաճելի կլինի:

Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ Թովմա Վանանդեցու Ամստերդամի տպարանում լույս տեսած մի շարք գրքերի դատարկ էջերում կամ բաց մնացած մասերում զետեղված են բանաստեղծություններ, սաղմոսներ կամ հայատառ պարսկերեն խոհախրատական ասույթներ: Այսպէս, Թովմա Գեմբացուն «Յաղագս համահետեւմանն Քրիստոսի...» (Ամստերդամ, 1696) գրքում առաջին եւ երկրորդ, երկրորդ եւ երրորդ գրքերի միջեւ եղած դատարկ էջերում տպագրված են Գրիգոր Նարեկացուց հատվածներ ( էջ 92, 139-140) այսպիսի ծանոթագրությամբ՝ «Այսքանս. զի մի տեղի ինչ մնայցէ պարապ» (էջ 92): Նույն այս սկզբունքով էլ վեր հիշված երեք գրքերում տպագրված են «Գոլեսթանի» հատվածները, որոնք հայերեն չեն թարգմանված: Այս հանգամանքը ենթադրել է տալիս այդ գրքերի հիմնական ընթերցողների այնպիսի շրջանակ, որ մայրենի լեզվին զուգահեռ իմացել է նաեւ պարսկերեն:

Ինչ վերաբերում է պարսկերեն այս հատվածների հայկական տառադարձմանը, ապա պետք է ասել, որ աննշան բացառությամբ այն ճիշտ է կատարված, մի իրողություն, որ վկայում է Ղուկաս Վանանդեցու պարսկերենի իմացության բարձր մակարդակը:

\* \* \*

Միջնադարյան հայկական բանաստեղծության մեջ առատորեն սփռված պարսկական բառային փոխառությունները հաճախ են հիշեցնում պարսկագիր հեղինակների: Այս տվյալների հիման վրա, սակայն երբեք էլ հնարավոր չէ պնդել, թե մեր այս կամ այն տաղերգուն, բանաստեղծ որոշակիորեն առնչվել է այսինչ պարսիկ հեղինակին, նրա այնինչ երկին: Բառային փոխառություններից ավելի նպաստավոր են ոճական փոխառությունները, որոնք մերթ ընդ մերթ մատնանշում, հասցեագրում են որոշակի գրողների:

Նման արժեքավոր ոճական հասցեագրումներից է «Պատմություն Ֆարման մանկան» միջնադարյան պոեմի մի ամբողջ տողը: Հայնի է, որ այս պոեմում այնքան շատ վոխառչալ բառեր կան, որ եվրոպական որոշ հայագետների (Է.Պրուդոն, Սեն Մարտեն, Ֆր. Մկլեր) հիմք են տվել ենթադրելու, թե պոեմը թարգմանված է պասկերեներից(12): Մի ենթադրություն, որը կասկածի տակ են առել կամ ժխտել են Ա.Չոպանյանը, Մ.Պոտուրյանը, Մ.Աբեղյանը եւ պոեմի քննական բնագիրը կազմող Շ.Նազարյանը (13):

Պոեմի մեզ հետաքրքրող տողը հետեւյալն է.

Ասէ... Քարան տեսէք եւ լուծվ ու յատապ...  
(թարգմ. Ասում է.- Վեհանձնությունը տեսէք եւ շնորհ ու բարեկրթությունը...):

Այս արտահայտությունը որոշակիորեն պատկանում է Սաադիին. վերցված է նրա «Գուլեսթանի» Ներածությունից, որտեղ բանաստեղծը «ամենաբարձրյալին» ուղղած իր փառաբանության մեջ ասում է.

Քարան բին օ լոթֆե խոդավանդգար...  
(թարգմ. Քարան տես եւ լուծվը աստուծո...  
կամ Վեհանձնությունը տես եւ շնորհը աստուծո):

Ինչպես տեսնում ենք, Ֆարման մանկան պատմության տողի եւ «Գուլեսթանի» տողի տարբերությունը միայն մի բառի մեջ է. Սաադիի մոտ աստված է գովերգվում, իսկ հայ հեղինակը նույն խոսքերով իր հերոսուհու գովքն է հյուսում: Հայկական բնագրում տողի վերջին յատապ բառը հանգի ու բարեհնչունության համար հարմարեցված է հաջորդ տողերի ավթապ, տարխապ, շաքըրլապ բառերին:

Թերեւս ենթադրվի, որ տողը փոխառյալ է ժողովրդական բառ ու բանից: Այս ենթադրությունը ընդունելի չէ, որովհետեւ այդ արտահայտությունը ժողովրդական մտածողության պարզությունն ու անմիջականությունը չունի, իսկ շարահյուսությունը միանգամայն հեռու է ժողովրդական անպաճույճ ձևերից. անգամ հայերեն թարգմանությունից էլ երեւում է անհատական ստեղծագործության կնիքը, հատկապես նրա վերամբարձրությունը, որը բնորոշ է «Գուլեսթանի» այս Ներածությանը: Խնդրո առարկա տողը Սաադիի մոտ բերված է հետեւյալ բեյթում.

(14)

Քարան բի օ լոթֆե խոդավանդգար  
Գոնահ բանդե քարդե ասթ օ ու շարմսար.

(Թարգմ. Վեհանձնությունը տես եւ շնորհը աստուծո.  
Սեղքը ստրուկս է կատարել եւ նա է ամոթահար):

«Պատմութիւն Ֆարման մանկան» պոեմի այս արժեքավոր տողը մեզ իրավունք է տալիս հայ գրականության ծանոթությունը Շիրազի անմահ երգչի հետ երեք հարյուրամյակով ետ տանել եւ դնել 15-րդ դարի սկզբները, մի ժամանակաշրջան, երբ հավանաբար ստեղծվել է Ֆարման մանկան պատմությունը:

Վերը թվարկված փաստերը ինքնին հայ-պարսկական գրական աշնջությունների հենքի մի փոքրիկ հատվածն են կազմում, սակայն նպաստում են բացահայտելու հայ գրականության մեջ պարսկականի թափանցման ուղրտները եւ, մասնավորապես, հայ հեղինկների համար Սաադիի երկերի հոգեհարազատության աստիճանը, որի հետեւանքով եւ նրա բառ ու բանը բնականորեն մուտք է գործել մեր գրականության մեջ:

**Ծանոթագրություններ**

1. Տե՛ս Բ. Լ. Չուգասյան, Հայ-իրանական գրական առնչություններ, Երևան, 1963, էջ, 199-200:

8 .1348.

(Շեյխ Մոսեհեդդին Սաադի, Գոլեսթան, Բեռլին, 1348/1929-30[և էջ8): «Գոլեսթանի» որոշ տարբերակներում այս տողերը բացակայում են: Հավանաբար սրանով պիտի բացատրել 1958 թ. հայերեն թարգմանության մեջ այս տողերի պակասը:

Դետաքրքիր է նշել, որ Աստվածաշնչից եկող Նոյ Նահապետի նավապետ լինելու հանգամանքը Կոնստանդին Երզնկացու մոտ հետեւյալ գեղեցիկ անդրադարձն է ունեցել:

Հովիւ չունինք տեսնող ու մենք ենք մոլորեալ ոչխեր,  
Շատ գայլք են յարձակել ի վերայ մեր խիստ անհամար.  
Ժիտեր մեզ նաւապետ մարդ կենդանի՝ զերդ Նոյ արդար,  
Որ մեր տապան գործեր, ծովուս լինէր եզր ու վճար...

Կոնստանդին Երզնկացի, Տաղեր, աշխատասիրությանը Ա. Սրապյանի, Երևան, 1962, էջ 201:

3.Սաադի «Գոլեսթանի» անվանի հայ թարգմանիչներից Հ.Թիրյաքյանը այս տողերը հետեւյալ կերպ է թարգմանում.

«Ինչ հոգ ազգի մ'պատին երբ դու ամուր  
պաշտպան կաս իր կըշտին,  
Կամ ինչ երկյուղ կա անդունդեն  
երբ Նոյ ինքն է վարող քաշտին»:

(Սաատի, Կոլեստան, թարգմ. Հ.Թիրյաքյան, Նյու-Յորք, 1920, էջ 3):

Հիւմնաթ-Ըմնաթ- Բառը մի շարք իմաստներ ունի, այդ թվում՝ ժողովուրդ, ազգ, հավատ, աղանդ, հետեւորդներ: Սաադին իր քառյակում գովերգում է Սոհամնեղ մարգարեին, ուստի եւ միջնադարյան հայ թարգմանիչը նախընտրում է բառի աշակերտներ (իմա հետեւորդներ) առումը՝ դուրս նետելով դրան նախադաս տիւար-պատ բառը: Հ.Թիրյաքյանը տողը մի քիչ ավելի բառացի է թարգմանում «ազգի մը պատին», որով քառյակի իմաստը որոշ չափով մթազնվում է: Կարծում ենք, որ տիւար հիւմնաթիրա արտահայտությունը «հավատի պարիսպ» թարգմանելով՝ ավելի հարագատ էք մնում բանգրին, որտեղ Սաադին ի դեմս իր մարգարեի՝ ակնարկում է մահմեդական աշխարհի անասանությունը:

4. Մաշտոցյան մատենադարանում պահվող Պետրոս Քյուրյուրի Քարոզագրքում ոչ միայն այս քառյակը չկա, այլեւ չկա որեւէ տաղ կամ ոտանավոր:

5. Տե՛ս Հ.Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, էջ 259:

6. Տե՛ս Մ.Թիրյաքյան, Հիշատակարանի մը հայատառ պարսկերեն ոտանավորը, «Սիոն», 1966, Հուլիս, էջ 356:

7.«Գանձ չափոյ կշռոյ թուոյ եւ դրամից բոլոր աշխարհի», Ամստերդամ, 1699, էջ 80:

8.Սաադի, Գոլեսթան, Բեռլին, էջ 13:

9. «Բնաբանութիւն իմաստասիրական կամ տարերաբանութիւն...» Յօրինեալ ի Սատթոսէ եւ ի Դուկասէ յապիրատ Վանանդեան դպրաց, Ամստերդամ, 1702, էջ 71:

10. Սաադի, Գոլեսթան, Բեռլին, էջ 7:

11. Սաադի, Գոլեսթան, էջ 16:

12. Տե՛ս «Անահիտ», 1904, No 3, էջ 63:

13. Տե՛ս անդ: «Բազմավեպ», 1807, No 4, էջ 189-190: Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հ. Բ, էջ XII: «Պատմութիւն Ֆարման մանկան», հարտ. պատրաստեց Շ.Նազարյանը, 1957, էջ 15-23:

14. Սաադի, Գոլեսթան, էջ 9:

## Saadi and the medieval armenian literature

Dr. B. L. Chougaszian

### Summary

In the article, the author states that until recent years researchers thought that the first acquaintance with Saadi in the Armenian literature happened in 19th century, but recent studies on the Persian-Armenian dictionary compiled by George Dbir Palatasti (1737- 1812) shows that the first translations of Saadi has been done in 1795-1800. Then he analyzes different translations of Saadi in Armenian, such as the translation done by H. Tiryakian (New York 1920).

سعدی و ادبیات سده های میانی ارمنی

شادروان دکتر بابکن چوگاسزریان

چکیده مقاله

در این مقاله پژوهشگر در باره زمان ترجمه آثار سعدی به ارمنی بحث می کند و اشاره می نماید که با تحقیقات او در باره فرهنگ فارسی-ارمنی اثر گئورگ دبیر پالاتاستی مشخص شد که نخستین ترجمه در سالهای 1800-1795 صورت گرفته است. آنگاه ترجمه های مختلف ارمنی بررسی و تحلیل می گردند. از جمله ترجمه ه. تیریکیان (نیویورک، 1920).